

**ԼՈՌՈՒ ԶԵԶՈՔ ԳՈՏՈՒ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՎԵՃԸ ԵՎ ՀՍԽՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ԺՈՂԿՈՄԱՏԸ (1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ-1921 Թ. ՓԵՏՐՎԱՐ)՝**

Հոդվածը նվիրված է 1920 թ. դեկտեմբերից մինչև 1921 թ. փետրվար Լոռու Չեզոք գոտու պատկանելության վերաբերյալ հայ-վրացական տարածքային վեճին և այդ ասպարեզում Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի գործունեությանը: Նոր նյութերի հիման վրա անդրադարձ է կատարվում Չեզոք գոտում Հայաստանի հատուկ լիազորի գործունեությանը, վեճը լուծելու վերաբերյալ եղած տարբերակներին, դիվանագիտական պայքարին ու մասնավորապես Թիֆլիսում հայ-վրացական կոնֆերանս գումարելու անհաջող փորձերին:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ տարածք, սահման, բանակցություն, զեկուցագիր, համաձայնագիր, գորք, արտաքին գործերի ժողկոմատ, դիվանագիտական ներկայացուցիչ, Հայաստան, Վրաստան, Լոռի, Թիֆլիս:

Հայաստանի խորհրդայնացումից հետո նոր իշխանությունների առջև ծառացած խնդիրներից էր հարևան պետությունների, այդ թվում՝ մենշևիկյան Վրաստանի հետ եղած տարածքային-սահմանային վեճերի կարգավորումը: Ասվածն առավելապես վերաբերում է Լոռու Չեզոք գոտուն, քանի որ 1920 թ. վերջին և 1921 թ. սկզբին Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՀՍԽՀ) իշխանություններն Ախալքալաքի հարցը դեռևս առաջ չէին քաշում: Հայ-վրացական Չեզոք գո-

տին ստեղծվել էր 1918 թ. դեկտեմբերին Վրաստանի և Հայաստանի միջև տեղի ունեցած պատերազմից հետո՝ 1919 թ. հունվարին Թիֆլիսում կայացած խորհրդաժողովի որոշմամբ:

Խնդիրն այն է, որ 1920 թ. սեպտեմբերին սկսված թուրք-հայկական պատերազմի շրջանում թուրքական զորքերի մուտքը Լոռի կանխելու մտահոգությամբ, Հայաստանի Հանրապետության կառավարությունը հավանություն էր տվել վրացիների առաջարկին և նոյեմբերի 13-ին Թիֆլիսում ստորագրել հայ-վրացական համապատասխան համաձայնագիր: Ըստ այդմ՝ վրացական զորքերը մուտք էին գործելու Չեզոք գոտի, սակայն դա Վրաստանին նոր իրավունքներ չէր տալու տարածքի նկատմամբ: Երեք ամիս ժամանակով ստորագրված համաձայնագրի պայմանների անշեղ կատարմանը հետևելու համար վրացական հրամանատարությանը կից նշանակվում էր ՀՀ հատուկ լիազոր:

1920 թ. նոյեմբերի 19-ին Չեզոք գոտում վրացական գերագույն հրամանատարության մոտ ՀՀ հատուկ լիազոր նշանակվեց հայտնի հասարակական-քաղաքական գործիչ, մասնագիտությամբ իրավաբան Գևորգ Խատիսյանը: Նրա կենտրոնատեղին Սանահինն էր: Գ. Խատիսյանը տարածքային-սահմանագծային խնդիրների մեջ գիտակ անձնավորություն էր, ինչը դրսևորվել էր դեռևս 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբերի Հայոց ազգային համախորհրդակցության, Հայաստանի և Վրաստանի սահմանագատման վերաբերյալ 1918 թ. հունիսի սկզբի հայ-վրացական բանակցությունների

¹ Հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՆ ԳԴԿ 13-6A402 ծածկագրով թեմայի շրջանակներում:

ընթացքում: 1918 թ. հունիսի կեսերին Կ. Պոլիս մեկնած Ա. Ահարոնյանի գլխավորած պատվիրակության կազմում Գ. Խատիսյանը հանդիսանում էր սահմանային հարցերի գծով խորհրդական: Ժամանելով Սանահին՝ Գ. Խատիսյանն ականատես եղավ ստորագրված համաձայնագրի տարբեր դրույթների՝ վրացիների կողմից խախտմանը, Լոռիի հայ ազգաբնակչության և այստեղ ապաստանած հայ գաղթականների հանդեպ խտրական վերաբերմունքի, հայ ակտիվ գործիչների հալածանքների, փաստեր հավաքեց մինչև նոյեմբերի 13-ը վրացական կառավարության՝ Չեզոք գոտի գործեր մտցնելու մտադրության, տարածքը վերջնականապես Վրաստանին միացնելուն ուղղված վրացական իշխանությունների քայլերի վերաբերյալ: Դեկտեմբերի 2-ին Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո նա անհաջող փորձ կատարեց կապ հաստատելու Երևանի հետ, ինչից հետո ժամանեց Թիֆլիս՝ Չեզոք գոտու հատուկ լիազորի պարտականությունները շարունակելու համար ՀՍԽՀ նոր իշխանությունների ներկայացուցիչներից լիազորություններ ստանալու նպատակով:

Հայաստանի խորհրդայնացումից հետո վերացել էր թուրքական զորքերի կողմից Լոռին գրավելու նախկինում եղած վտանգը, ինչը պատճառ էր հանդիսացել 1920 թ. նոյեմբերի 13-ի համաձայնագրի կնքման համար: Սակայն վրացիները ոչ միայն չէին շտապում զորքերը հանել Չեզոք գոտուց, այլև տարաբնույթ քայլերի էին դիմում՝ շրջանում ավելի ամրապնդվելու և այն Վրաստանին կցելու նպատակով:

Երևանում հաստատվելուց մի քանի օր անց՝ 1920 թ. դեկտեմբերի 7-ին, Վրաստանի կառավարությանն ուղղված հայտագրում Հայաստանի հեղկոմը պահանջեց շուտափույթ կերպով վրացական զորքերը դուրս հանել Չեզոք գոտուց և ազատորեն թույլատրել տրանզիտային ապրանքների մուտքը Հայաստան: Դեկտեմբերի 10-ով թվագր-

վող վրացական կառավարության պատասխան հայտագրում արտգործնախարարի փոխանորդ Կոնստանտին Սաբախտարաշվիլին վրացական զորքերի կողմից Չեզոք գոտու ռազմականումը հիմնավորում էր նոյեմբերի 13-ի համաձայնագրով:

Սահմանավեճի հարցում միանման չէին կողմերի մոտեցումները: Եթե հայկական կողմի կարծիքով վրացական զորքերը պետք է անմիջապես դուրս բերվեին Չեզոք գոտուց, ապա վրացիները, իրենց զորքերի մնալը պատճառաբանելով քննալական վտանգի առկայությամբ, առաջարկում էին պահպանել գոյություն ունեցող իրավիճակը՝ բանակցությունների ժամանակ, փաստորեն, քննության առնելով նաև վրացական զորքերի դուրսբերման խնդիրը: Վրացական տարբերակը չէր կարող ընդունելի լինել Խորհրդային Հայաստանի համար: Այս իրողությունն արտացոլված է վրացական կողմին ուղղված ՀՍԽՀ արտգործ-ժողկոմատի հայտագրերում: Նշենք, որ ՀՍԽՀ և Վրաստանի արտաքին գերատեսչությունների ղեկավարները Լոռու խնդրի առնչությամբ հայտագրեր փոխանակեցին 1920 թ. դեկտեմբերի 18-ին և 21-ին, դեկտեմբերի 29-ին և 1921 թ. հունվարի 5-ին: Այս փաստաթղթերում խոսվում էր Թիֆլիսի համաձայնագրի դրույթները վրացիների կողմից խախտելու, երկկողմ բանակցություններ անցկացնելու, նաև բանակցություններին Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցության մասին:

Կարծում ենք, 1920 թ. նոյեմբերի 13-ին Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության միջև ստորագրված համաձայնագիրը ՀՍԽՀ իշխանությունների կողմից չձանաչելը պայմանավորված էր ոչ միայն վրացիների կողմից համաձայնագրի դրույթների խախտմամբ (ինչն ակնհայտ էր), այլև նախկին (դաշնակցական) կառավարության ստորագրած երկկողմ ու բազմակողմ պայմանագրերից ու համաձայնագրերից հրաժարվելու սկզբուն-

քային դիրքորոշմամբ ու գործելաձևով։ Վրաստանի հետ կայանալիք բանակցություններին պատրաստվելու տեսակետից զգալի աշխատանք էր կատարում Թիֆլիսում ՀՄԽՀ նորանշանակ լիազոր ներկայացուցիչ Դանուշ Շահվերդյանը (նշանակվել էր 1920 թ. դեկտեմբերի 26-ին)։ Այս առթիվ հետաքրքիր տեղեկություններ ենք իմանում 1921 թ. հունվարի 17-ին ՀՄԽՀ արտգործոժողկոմ Ա. Բեկզադյանին ուղղված Դ. Շահվերդյանի նամակից։ Տեղեկացնելով, որ Չեզոք գոտուց դուրս գտնվող անվիճելիորեն հայկական բնակավայրերը (Ջալալօղլի, Շահալի, Քոլագիրան, Գյուլագարակ, Գարգառ, Դսեղ և այլն) վրացական զորքերի կողմից ռազմակալվելու առթիվ զրույց է ունեցել Կ. Սաբախտարաշվիլու հետ, Դ. Շահվերդյանը կարծիք է հայտնում, թե վրացիներն իրենց զորքերը հեշտությամբ դուրս չեն հանի հայկական տարածքներից։ Նա նշում էր, որ առաջիկա հայ-վրացական բանակցությունների ժամանակ նրանք կփորձեն չարաշահել Խորհրդային Ռուսաստանի հետ 1920 թ. մայիսի 7-ին կնքած համաձայնագիրը՝ պնդելով, որ Չեզոք գոտին՝ իբրև Թիֆլիսի նահանգի մեջ մտած տարածք, Վրաստանի մաս ճանաչվի։ ՀՄԽՀ լիազոր ներկայացուցիչն այս հանգամանքով էր բացատրում առաջիկա կոնֆերանսին Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությանը վրացիների դրական վերաբերմունքը և Կ. Սաբախտարաշվիլու՝ կոնֆերանսը հնարավորինս շուտ գումարելու ցանկությունը։ Դ. Շահվերդյանը տեղեկացնում էր նաև, որ առաջիկա հայ-վրացական կոնֆերանսին պատրաստվելու նպատակով ինքը լիազոր ներկայացուցչությանը կից հանձնաժողով է ստեղծել՝ Լոռու Չեզոք գոտու վերաբերյալ տեղեկատվություններ պատրաստելու համար։ Հանձնաժողովի մեջ ընդգրկված Գևորգ Խատիսյանը պետք է տեղեկություններ հավաքեր Լոռու տարածքի և բնակչության, Սաքո Սահակյանը, Կարապետյանը և Գաբրիել

Գրիգորյանը՝ տնտեսության, Արամայիս Երզնկյանը՝ հարցի նախապատմության, իսկ Սիմոնիկ Փիրումյանը՝ հասարակական-քաղաքական կյանքի վերաբերյալ։ Նախատեսվում էր հանձնաժողովի աշխատանքներն ավարտել հունվարի վերջին։ Նշվում էր, որ կարևոր խնդիր է կոնֆերանսում քննարկելիք հարցերի շրջանակը որոշելը։ Լիազոր ներկայացուցիչը տեղեկացնում էր, որ Գ. Խատիսյանն առաջարկել է Չեզոք գոտու հարցը քննարկել ոչ թե առանձին, այլ երկու երկրների միջև եղած բոլոր վիճելի հարցերի հետ միաժամանակ։ Դ. Շահվերդյանը կարևորություն էր տալիս այս տեսակետին, ինչի արդյունքում Երևան ուղարկվող մի շարք փաստաթղթերի թվում (Լոռու խնդրի վերաբերյալ Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության, ՀՄԽՀ լիազոր ներկայացուցչության գրագրություններ) ուղարկեց նաև Գ. Խատիսյանի նշված զեկուցագրի պատճենը։

Ինչպես տեսնում ենք, իր գիտելիքների և փորձի պատճառով Խորհրդային իշխանություններն անուշադրության չմատնեցին Գ. Խատիսյանին։ Դ. Շահվերդյանի հունվարի 17-ի գրությունում հիշատակված զեկուցագրում (այն թվագրված է 1921 թ. հունվարի 10-ով) Գ. Խատիսյանն առաջարկներ էր կատարում հայ-վրացական տարածքային խնդիրները կարգավորելու առնչությամբ։ Քննության առնելով ծով դուրս գալու ճանապարհին Հայաստանի համար ձորոխի ավազանի նշանակության հարցը՝ Գ. Խատիսյանը շեշտում է Արդվինի շրջանի և Ձանսուլյան հանքավայրի ու գործարանի կարևորության մասին։ Ահա այս պատճառով համոզմունք է հայտնում, թե «Հայաստանի գոյությունն անհնար է առանց Կարսի վերադարձման և Կարսից դեպի Սև ծով ճանապարհի անցկացման։ Եվ առանց Կարսի վերադարձման հավատի անկարելի է կառուցել Հայաստանը»։ Զեկուցագրում մատնանշվում էր, որ հայկական կողմի համար առավել ձեռնտու կարող է լինել

Հայաստանի և Վրաստանի միջև վիճելի համարվող բոլոր տարածքների (Լոռի, Ախալքալաքի գավառ, Կարսի մարզ, Արդվիհի շրջան) հարցի միաժամանակ բարձրացումը, քան սկզբում միայն Չեզոք գոտու սահմանազատման խնդիրն առաջ քաշելը:

Մոսկվայում կայանալիք խորհրդաթուրքական կոնֆերանսին մեկնելու ճանապարհին ՀՄԽՀ արտգործոժողկոմ Ա. Բեկզադյանը կանգ առավ Թիֆլիսում՝ Վրաստանի կառավարության հետ նախատեսվող բանակցությունների հարցը պարզելու նպատակով: 1921 թ. հունվարի 19–21–ին Վրաստանի արտգործնախարարի փոխանորդ Կ. Սաբախտարաշվիլու հետ Ա. Բեկզադյանի վարած բանակցությունները դրական ելքի չհանգեցրին, ինչից հետո վերջինը մեկնեց Բաքու: Բաքվից Ա. Մոսկվայի ու Ս. Կասյանի հետ ունեցած հեռախոսազրույցի ժամանակ նա տեղեկացնում էր, որ բանակցությունները փակուղի են մտել, քանի որ վրացական իշխանությունները մերժել են իր առաջարկը՝ բանակցություններին վճռական ձայնի իրավունքով մասնակից դարձնել նաև Խորհրդային Ռուսաստանին:

Վրացական գործերը Չեզոք գոտուց դուրս հանելու և հայ–վրացական բանակցություններին Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցության ձևաչափի հարցում անհամաձայնության պատճառով Լոռու խնդիրը խաղաղ ճանապարհով կարգավորելուն ուղղված ջանքերն ապարդյուն եղան. տարածքը դարձավ խորհրդա–վրացական ռազմական առձակատման թատերաբեմ: 1921 թ. փետրվարի 12–ին Չեզոք գոտում սկսված հայ գյուղացիների ապստամբությունը լայն ծավալներ ընդունեց և ազդանշան էր խորհրդային 11–րդ Կարմիր բանակի կողմից Վրաստանի խորհրդայնացումը սկսելու համար:

Անդրկովկասում գործող կոմունիստ գործիչները, ազգությամբ վրա–

ցի Գ. Օրջոնիկիձեի գլխավորությամբ, դեռ 1920 թ. դեկտեմբերից պատրաստվում էին Վրաստանի խորհրդայնացմանը: Կատարվող պատրաստությունները չէին կարող աննկատ մնալ վրացիներից: Այս առթիվ 1921 թ. փետրվարի 12–ին Թիֆլիսում ՀՄԽՀ լիազոր ներկայացուցչին ուղղված նոտայում Կ. Սաբախտարաշվիլին նշում էր, որ փետրվարի 11–ին հայկական զորքերը հարձակման են անցել՝ այն դեպքում, երբ պայմանավորվածություն կա վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու: Փետրվարի 14–ի պատասխան գրության մեջ Դ. Շահվերդյանը բերում էր Լոռիում վրացական անօրինական գործունեության տարբեր փաստեր, նշում տարածքը Վրաստանին միացնելուն ուղղված քայլերի մասին և հավաստիացնում, որ հայկական կողմը համոզված է, որ խնդիրը լուծվելու է ոչ թե միակողմանի՝ ռազմական ճանապարհով, այլ փոխադարձ համաձայնությամբ: Արդեն փետրվարի 15–ին խորհրդային զորամասերն ու հայ ապստամբներն ազատագրեցին Չեզոք գոտին, իսկ փետրվարի 25–ին 11–րդ Կարմիր բանակը մտավ Թիֆլիս, ինչի արդյունքում խորհրդային կարգեր հաստատվեց նաև Վրաստանում:

Նշենք, որ Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Վրաստանի միջև սահմանների որոշումն ու հստակեցումն ամրագրվեց 1921 թ. նոյեմբերի 6–ին Թիֆլիսում ստորագրված երկկողմ պայմանագրով: Համաձայնագրի համաձայն՝ վրացիները որոշ տարածքներ ստացան նաև Լոռու Չեզոք գոտուց: Սահմանազատման հիմքում Ալեքսանդրապոլի և Ախալքալաքի սահմանների մասում ընկած էր նախկին ցարական վարչատարածքային բաժանումը, իսկ Լոռու Չեզոք գոտու նախկին սահմանները լիովին փոփոխված էին՝ ի վնաս Հայաստանի: Այսպես որոշվեց հայ–վրացական սահմանագծը, որը որոշ վեճեր է առաջացնում նաև մեր օրերում:

ՊՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 114, ց. 2, գգ. 11, 12, 26, 35, 49, 56, 71:
2. ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 223:
3. ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գգ. 327, 334:
4. Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ.՝ Գ. Ա. Գալոյանի և Վ. Ն. Ղազարխեյանի, Երևան, 2000, 454 էջ:
5. «Կոմունիստ» թերթ (Երևան), 1920 թ., NN 4, 13, 16:
6. Խաչատրյան Կ. Հ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թթ., Երևան, 2007, 360 էջ:
7. Մելքոնյան Ա. Ա., Ջավախքը 19–րդ դարում և 20–րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003, 543 էջ:
8. Սարգսյան Կ. Խ., Հայ-վրացական հարաբերությունները 1918–1921 թթ., Երևան, 2002, 222 էջ:
9. Սոփիասյան Հ., Հայ-վրացական խաղաղարար կոնֆերանսի հայկական պատվիրակության հաշվետվությունը (1918 թ. դեկտեմբեր – 1919 թ. մարտ), «Պատմաբանասիրական հանդես», 2009, N 1, էջ 185–206:
10. Сукиасян А., Документы об армяно-грузинском пограничном споре в Лори (декабрь 1920 г. – январь 1921 г.), «Историко-филологический журнал», 2010, N 1, с. 253–262.

АРМЯНО–ГРУЗИНСКИЙ ТЕРРИТОРИАЛЬНЫЙ СПОР О НЕЙТРАЛЬНОЙ ЗОНЕ ЛОРИ И РОЛЬ НАРОДНОГО КОМИССАРИАТА ИНОСТРАННЫХ ДЕЛ ССРА (ДЕКАБРЬ 1920 Г.–ФЕВРАЛЬ 1921 Г.)

АМО СУКИАСЯН

Национальная академия наук РА, Международный научно – образовательный центр, преподаватель кафедры истории, кандидат исторических наук

Статья посвящена армяно–грузинскому территориальному спору относительно принадлежности Нейтральной зоны Лори с декабря 1920 г. до февраля 1921 г. и деятельности Народного комиссариата иностранных дел Советской Армении в этом вопросе. На основе обнаруженных недавно документов в статье обсуждаются вопросы, касающиеся деятельности полномочного представителя Армении в Нейтральной зоне, вариантов разрешения спора, дипломатической борьбе и, в частности, неудачных усилий созыва армяно–грузинской конференции.

THE ARMENIAN–GEORGIAN TERRITORIAL DISPUTE ABOUT THE NEUTRAL ZONE OF LORI AND THE ROLE OF THE PEOPLE’S COMMISSARIAT OF FOREIGN AFFAIRS OF SSRA (DECEMBER 1920–FEBRUARY 1921)

HAMO SUKIASYAN

*International Scientific–Educational Center of the National Academy of Sciences of the Republic of Armenia
Lecturer at ISEC NAS RA, Candidate of Historical Sciences*

The article is devoted to the Armenian–Georgian territorial dispute on the affiliation of the Neutral zone of Lori from December 1920 until February 1921 and to the Activity of People’s Commissariat of Foreign Affairs of Soviet Armenia in this regard. On the basis of recently discovered documents, issues concerning the activity of the Plenipotentiary representatives of Armenia in the Neutral zone, the variants of dispute resolution, the diplomatic struggle and particularly the unsuccessful efforts to convening Armenian–Georgian conference are discussed.